Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշման N 3 հավելվածի N 1 ձևի երկրորդ աղյուսակը «Տեղեկանք անասնաբույժից՝ ընտանիքի տնօրինած անասնատեսակի և դրա քանակի մասին» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«

Տեղեկանք՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված (այդ թվում՝ առևտրային բանկի մասնաճյուղի միջոցով)՝ ընտանիքի չափահաս անդամների՝ տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին (տեղեկանքն ստանալիս պետք է առկա լինի բոլոր չափահաս անդամների կողմից տրված համաձայնությունը կամ նրանց կողմից տրված նոտարական կարգով հաստատված լիազորագիր՝ նպաստ ստանալու համար դիմող անձին՝ ԱՔՌԱ վարկային բյուրոյից հարցում կատարելու վերաբերյալ)			
Հայտարարություն՝ ընտանիքի չափահաս անդամների բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին (բանկային ավանդ ունենալու դեպքում ներկայացվում է նաև բանկի կողմից տրված տեղեկանք՝ ավանդի չափի և տվյալ հաշվետու տարվա ընթացքում դրա վրա հաշվեգրված տոկոսների մասին)			

»:

18_0072

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը մշակել ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի չափահաս անդամների տվյալ պահին առկա վարկային պարտավորությունների և ժամկետանց վարկերի մասին ԱՔՌԱ վարկային բյուրոյից ստացված տեղեկանքներում ներառված, ինչպես նաև բանկային ավանդների և դրանցից ստացված եկամուտների մասին տվյալները, որպես բնութագրիչ կիրառելու մասին առաջարկություն և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո: